

11.05.2014

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Կոտայքի մարզպետ Արամ Հարությունյանը ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի հետ միասին այցելել է Կոտայքի մարզի Թեղենիք համայնք:

Համայնքային այս այցելությունը հիմնականում նպատակ է ունեցել տեղում ծանոթանալ Թեղենիքում թրթուրների տարածման իրավիճակին և հետևել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից այդ ուղղությամբ տարվող կանխարգելիչ միջոցառումների ընթացքին:

Այցելության շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում համայնքի բնակիչների հետ, ինչպես նաև շրջայց գյուղացիական տնտեսություններում: Գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուները ներկայացրել են, որ արդեն իսկ օկնոզենա վնասատուի դեմ քիմիական պայքարի իրականացման համար մարզի համայնքներին անհատույց հատկացրել է «Ցիպեր մաքսի» բույսերի պաշտպանության միջոցը:

Գյուղացիական տնտեսությունների հետ հանդիպման ընթացքում ՀՀ Կոտայքի մարզպետ Արամ Հարությունյանը տեղեկացրել է, որ անհրաժեշտության դեպքում գյուղացիական տնտեսություններին անհատույց կտրամադրվի դիզելային վառելանյութ՝ պայքարի միջոցառումներն իրականացնելու համար:

Այցելության ավարտին տեղի է ունեցել նաև հանդիպում ՀՀ Կոտայքի մարզպետարանի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության Կոտայքի մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի, «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների հետ: Համապատասխան պատասխանատուներին հանձնարարվել է կատարել ամենօրյա աշխատանք և իրավիճակի մասին տրամադրել տեղեկատվություն՝ հնարավոր սեղմ ժամկետներին ավարտելով պայքարի աշխատանքները:

